ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2023թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան համայնքում տեղական վճարների 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 687-Ն որոշմամբ հաստատված հավելվածում՝

1) 4-րդ կետում «նախապատրաստման» բառից հետո լրացնել «, մասնավորապես՝ պայմանագրի նախագծի մշակման» բառերը և կետադրական նշանը.

2) 4-րդ կետից հետո լրացնել նոր 4.1-ին, 4.2-րդ, 4.3-րդ, 4.4-րդ, 4.5-րդ, 4.6-րդ, 4.7-րդ, 4.8-րդ և 4.9-րդ կետեր.

«4.1. Երևանի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող և օգտագործման տրամադրված հողամասի օգտագործման ժամկետների երկարաձգման դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման, մասնավորապես՝ պայմանագրի նախագծի մշակման համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:

4.2. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի փոխանակության դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման, մասնավորապես՝ փոխանակության պայմանագրի նախագծի մշակման համար՝ համայնքից ստացվող հողամասի անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման արժեքի 5 տոկոսի չափով:

4.3. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող բնակարանների նվիրատվության (բացառությամբ Երևան քաղաքի ավագանու կողմից) դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման, մասնավորապես՝ պայմանագրի նախագծի

մշակման համար՝ որպես նվիրատվություն ստացվող բնակարանի անշարժ գույքի հարկի երեք տարվա գումարի չափով:

4.4. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և (կամ) գործառնական նշանակության փոփոխության դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ հողամասի անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման արժեքի 5 տոկոսի չափով:

4.5. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների գործառնական նշանակության փոփոխության դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ մինչև փոփոխումը եղած գործառնական նշանակությանը համապատասխան անշարժ գույքի հարկի հինգ տարվա գումարի չափով:

4.6. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի սահմանների ճշտման դեպքերում (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ հողամասի անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման արժեքի 2 տոկոսի չափով:

4.7. Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու վճար՝ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ չորս միլիոն դրամի և 3001 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար չորս միլիոն դրամի հանրագումարի ու սույն հավելվածի 4.9-րդ կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

4.8. Նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) վճար՝ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3001 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն հավելվածի 4.9-րդ կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

4.9. Սույն հավելվածի 4.7-րդ և 4.8-րդ կետերի համաձայն՝ նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) և դրա փոփոխության (նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար տեղական վճարի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

Գոտի	Գոտիականության գործակից
1-3	4.0
4-7	3.0
8-12	1.0

.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«__»_____ 2023թ.

ք. Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ– ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող, օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

Նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված են տեղական վճարների տեսակները, իսկ 13-րդ և 14-րդ հոդվածներով կարգավորված են տեղական վճարների դրույքաչափերի սահմանման հետ կապված հարաբերությունները:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ տեղական վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանվում են նույն օրենքով, ինչպես նաև համայնքի ավագանու որոշմամբ՝ սահմանելով նույն օրենքի տեղական վճարների տեսակների մեջ չներառված տեղական վճարների նոր տեսակներ և դրանց դրույքաչափերը:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 687-Ն որոշմամբ հաստատվել են Երևան համայնքում տեղական վճարների 2023 թվականի դրույքաչափերը:

Այս առումով հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի կարգավորումները՝ Նախագծով առաջարկվում է «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 687-Ն որոշման մեջ կատարել լրացումներ՝ սահմանելով նոր տեղական վճարներ և դրանց դրույքաչափերը:

Նախագծով առաջարկվող կարգավորումների նպատակն է կարգավորել Երևան համայնքի կողմից մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող տեղական վճարների հետ կապված հարաբերությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 687-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 687-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեում նախատեսվում է բյուջեի եկամուտների ավելացում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ